

ԳՐԻՆ ՈՒ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԸ

Հայոց գրաւոր առաջին հանելուկներն ստեղծուել են Ե. կամ Զ. դարում: Առաջին անգամ հրատարակուել են 1848ին «Բագմավէպ»ում: Հ. Ղ. Ալիշանը, ապա նաեւ Մ. էմինը դրանք հրատարակել են ձեռագրերում առկայ ընդհանրական խորագրերով՝ «Խմաստութիւն Դաւթի Քերթողի», «Դաւթի փիլիսոփայի իմաստութիւն»՝ ենթագրելով, որ հեղինակը Ե.-Զ. դարերում ապրած Դաւիթ Անյաղթն է կամ որ նոյնն է՝ Դաւիթ Քերթողը¹: Այս տեսակէտին որոշ վերապահումներով հակադրուում է Ա. Մնացականեանը, ով կազմել է հանելուկների գիտաքննական բնագրերը²: Նա հակուած է ընդունելու, որ հանելուկները յօրինուել են Ե. դարում Դիոնիսիոս Թրակացու Քերականութիւնը թարգմանող, մեկնող, «Յաղագս Տիգրանայ» քերթուածի հեղինակ Դաւիթ Քերթողի կողմից, թէեւ, ըստ նրա, Դաւիթ Անյաղթի եւ Դաւիթ Քերթողի չփոթութիւնը վերջնականապէս յաղթահարուած չէ³:

Մնացականեանը նկատում է, որ վերոնշեալ ստեղծագործութիւնը ժողովրդական հանելուկներից տարբերուում է յօրինուածքային հետաքրքիր առանձնայատկութեամբ. այն մի քանի հանելուկներից բաղկացած շարք է⁴:

1 «Բագմավէպ», Զ (1848), քիւ 12, 192: МОИСЕЙ ХОРЕНСКИЙ, *История Армении*, М., 1858, стр. 369: Հանելուկների հրատարակման պատմութիւնը հանգամանորէն տե՛ս ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., *Հայ միջնադարեան հանելուկներ (V-XVIII դդ.)*, Երևան 1980, 15-34:

2 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ Ա., *Հայ միջնադարեան հանելուկներ (V-XVIII դդ.)*, 524 էջ:

3 Անդ, 37, 45:

4 Անդ, 38-45:

Իսկապէս, հանելուկը բաղկացած է տասը փոքր, հիմնականում երկտող հանելուկներից: Այն, սակայն, մի ամբողջութիւն է կազմում եւ ցոյց է տալիս գրի ներքին զարգացումը՝ աստուածային արարչագործութիւնից մինչեւ գրին վերապահուած գործառնությունները եւ թուային խորհրդաբանութիւնը: Լեզուամտածողութեամբ հնութեան դրոշմը կրող այս հանելուկի մասին Հ. Ղ. Ալիշանը գրում է. «...Ասանկ վարպետ եւ խրթին գրուածք մը գրչէ գրիչ անցնելով եւ շատէն չհասկըցուելով՝ շատ փոփոխուեր է եւ երկընցուցած կամ կարնեցուցած է: Ումանք վեցերորդ տունը չունին, որ աւելորդ ալ է, ումանք չորրորդն ալ: Իսկ իմաստը կէս մը ընդհանուր գրի վրայ, կէս մ'ալ հայերէն գրերուն վրայ յարմարցուցած է եւ մեզի տեղի կու տայ քանի մը բան դիտելու եւ քննելու»⁵:

Դաւիթ Քերթովին վերագրուող հանելուկաշարում որոշակի ականարկներ կան Հայոց Այբուբենի արարմանը, ինչպէս նաեւ յաջորդող դարերում տարբեր պատմիչների տուած այն մեկնաբանութիւններին, թէ Մաշտոցի կողմից սկզբնապէս քանի գրով է ստեղծուել Հայոց Այբուբենը⁶: Առաջին երկու տողերով ականարկում է Այբուբենի աստուածատուր լինելու մասին: Ալիշանը ենթադրում է, որ այդ տողերը հայերէն գրերին են վերաբերում: Նա վկայակոչում է Խորենացուն, ով գրում է, թէ գրերը արուեցին Ս. Մեսրոպին աստուածային Աջով գրուելով⁷: Նոյն ձեւով հանելուկում է ասուում.

Ձեռք Ամենակալին ստեղծ գիս,

Եւ բարձրեալն ի բարձունս ընծայեաց գիս⁸:

Տարբերոյթ մեկնութիւնների տեղիք կարող են տալ երկրորդ հանելուկի տողերը.

Յորժամ ծնաւ գիս մայր իմ՝

Ես իմաստնացուցի գնա:

5 «Բագմալէպ», Զ (1848), քիւ 16, 247:

6 Տե՛ս Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին. Աշխատասիրութեամբ Յակոբ Քեսեյեանի եւ Վարդան Դեւրիկեանի, Երեւան 2019, 51-136:

7 ՄՈՎՍԻՍԻ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Գիրք Գ., գլ. ԾԳ., աշխտ. ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, Ս., Երեւան 1981, 405:

8 ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայ միջնադարեան հանելուկներ, 171-173 (Այսուհետ հանելուկների էջերը կը նշենք տեքստում՝ մէջբերման վերջում):

Կարելի է ենթադրել, որ գրիչը, ով գրում է գրերը, իմաստանում է իր գրած գրերով:

Կապուած թուային խորհրդաբանութեան ու արեւելեան ժողովուրդների Այբուբենների հետ, ասուել է, որ Դանիէլեան գիրը սեմական ժողովուրդների Այբուբենների նման կազմուած է եղել բաղաձայններից, եւ Մաշտոցը ստեղծել է միայն ձայնաւորները, որով Այբուբենը սկզբնապէս 29 տառ է ունեցել⁹: Մէկ այլ մեկնութեամբ՝ Այբուբենի տառերը նախ 24 են եղել՝ երկու տասներկու, ապա ստեղծուել է 12ի երրորդ եռեակը, եւ նոր դարձել են 36 գրեր¹⁰: Նման ըմբռնման արձագանքն են չարքի 5-6րդ տողերը, որոնցում ասուում է.

Չափ ամաց իմոց յառաջն էր երկու երկոտասան,
Անեցի եւ զարգացայ, եւ այժմ եմ երեք երկոտասան:

7-8-րդ տողերում ասուում է.

Կամ յարեւելս եւ իսաւսիմ յարեւմուտս,
Ի հիւսիսոյ ի հարաւ ընթանամ:

Այն նախ կարելի է հասկանալ որպէս գրի տարածումը արեւելքից արեւմուտք եւ հիւսիսից հարաւ: Նկատի ունենալով սակայն գրքի ընթերցման կանոնները՝ կարելի է մեկնաբանել որպէս ձախից աջ եւ վերեւի տողից դէպի ներքեւի տողն ընթերցելը:

9-10րդ տողերում նկատի ունի, որ գիրը գրւում է մեռեալ կաշուի վրայ, որով մեռեալների միջից է խօսում, եւ երբ ընթերցում են, անշունչ կաշուից ձայն է արձակում:

Յաջորդ երկու տողերը (6րդ հանելուկ) նոյն այս մտքի կրկնութիւնն են: Դրոշմուած լինելով մեռեալ կաշուի վրայ՝ գիրը ողջ եղողների հետ է խօսում.

Մեռեալ եմ
Եւ ընդ կենդանիս իսաւսիմ:

9 Այս մասին տե՛ս ԱՃԱՌԵԱՆ, Հ., Հայոց գրերը, Երեւան 1984, 484-485, ՄԻԽԱՐ ԱՅՐԻԻԱՆԵՑԻ, Գանձեր եւ տաղեր, աշխտ. է. Յարութիւնեանի, Երեւան 2005, 113-114, ՊՕՂՈՍԵԱՆ, Գ., Դանիէլեան գրերի հարցը միջնադարեան քննադատական ըմբռնումների տեսանկիւնից, ի «Էջմիածին», 2005, Զ., 87-98, է.Ը., 110-125:

10 Այս մասին տե՛ս ԱՃԱՌԵԱՆ, Հ., Հայոց գրերը, 486:

13-14րդ տողերը՝ «Յանդնդոց ձայն արձակեմ// Եւ առ բարձրեալն աղաղակեմ», *Թերեւս նշանակում են, որ մարդ իր հոգու խորքից առ Աստուած է առաքում իր խօսքը, ինչպէս որ Նարեկացին է ասում. «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»:*

15-16րդ տողերում դարձեալ առաջին դէմքով ասում է, որ իր ծնունդը ջրից է, եւ մահը՝ նոյնպէս ջրից, որով նկատի ունի Թանաքի հեղուկ¹¹ լինելը, որից գրուելով ծնւում է եւ նոյն ջրով ջնջուելով՝ մեռնում է գիրը:

17-18-րդ տողերում այն միտքն է արտայայտւում, որ գիրը կրող թուղթը եւ մագաղաթը հրից այրւում են եւ ջրից ջնջւում՝ սասանւում, իսկ երբ փորագրւում են քարին, չեն վախենում ո՛չ հրից եւ ո՛չ էլ ջրից:

Ի հրոյ գարեհուրիմ եւ ի ջրոյ սասանիմ,
Բայց մատելով ի վէմս՝ արեամարեմ գնոսա:

Շարքում միայն վերջին 10րդ բանաստեղծութիւնն է, որ կազմուած է չորս տողից եւ ներկայացնում է գիր բառի թուալին խորհուրդը:

Անուն իմ բաղկանայ երիւք տառիւք.
Երբեակն ի միակէ,
Երկեակն ի տասնէկէ
Եւ հնգեակն ի հազարէ:

«Գիր» անուանման եւ Հայոց միջնադարում նրա մեկնաբանման հոգեւոր խորհրդի խտացումն է համարում վերջին հանելուկը Վ. Դեւրիկեանը: Նա գրում է. «Գ»ի թուային արժէքը երեքն է, որի համար Հայոց միջնադարում հոգեւոր մեծ խորհուրդ է հաղորդուել «գիր» բառին, թէ ոչ միայն Հայոց գիրն է աստուածատուր, այլեւ «գիր» անուանումն իսկ: Այն թէ՛ այս հանելուկում եւ թէ՛ միջնադարեան մի շարք այլ բնագրերում մեկնաբանուել է հետեւեալ ձեւով. «գիր» բառը կազմուած է երեք տառից, որոնք մէկ իմաստ են արտայայտում, ինչպէս որ Սուրբ Երրորդութիւնն է կազմուած երեք անձից՝ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, եւ միաժամանակ միասնական ու անբաժանելի մի

11 Ձեռագրերում կան յիշատակութիւններ, թէ ինչ նիւթերից են պատրաստուել տարբեր տեսակի քանաքնները, քանի լիտր ջուր է անհրաժեշտ եղել: Այդ մասին տե՛ս ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ա., *Ներկերը եւ քանաքնները հին հայկական ձեռագրերում*, Երեւան 1941:

ամբողջութիւն է՝ որպէս մէկ միութիւն: Երեք գրերով՝ երրորդութեամբ մի ամբողջութիւն կազմելն առաւել է ընդգծում նաեւ այն հանգամանքով, որ ոչ միայն «գիր» բառն է կազմուած Սուրբ Երրորդութիւնը խորհրդանշող երեք տառերով, այլեւ այս բառի առաջին տառի թուային համարժէքն է երեքը, որի համար այս հանելուկում ասում է. «Երբեակն ի միակէ»¹²:

Այս հանելուկը, հետեւաբար, իւրօրինակ փառաբանութիւն է Ամենակալին, ում ձեռքով արարուած Գիր բառն անգամ խորհրդանշում է Սուրբ Երրորդութիւնը, աւելին՝ կրկնակիօրէն է արտայայտում Երրորդութեան գաղափարը:

Դաւիթ Անյաղթի «Սահմանի իմաստասիրութեան» գործի հետեւողութեամբ վերոնշեալ հանելուկաշարը ձեռագրերում անունուել է «Խմաստութիւն Դաւիթի Քերթողի»¹³: Եւ ինչպէս Դաւիթ Անյաղթի մի շարք գործեր, սկսած «Խաչի փառից», յաջորդող դարերում ենթարկուել են մեկնութիւնների, այնպէս եւ այս հանելուկն է երկիցս նման մեկնութիւնների ենթարկուել վերջինիս հետեւողութեամբ գրուած եւս երկու հանելուկաշարերով: Նրանցում տեղ են գտել նաեւ այս հանելուկի լուծում պահանջող մի շարք հարցադրումներ:

Ինչպէս որ «Խաչի փառի» առաջին մեկնութիւնը պատկանում է Ներսէս Շնորհալու¹⁴, այնպէս եւ նա է հեղինակը յիշեալ հանելուկի հետեւողութեամբ գրուած նոր հանելուկի: Վերջինիս առաջին երկու տողերը բառացի համընկնում են, իսկ 3-4րդ տողերը, իմաստով լինելով նոյնը, տարբերում են շարադրանքով.

Մինչ ծնա՝

Խմաստացուցի գմայր իմ (Էջ 252):

5-16րդ տողերը բացակայում են Շնորհալու մօտ, 17-18րդ տողերը տեղաշարժուած են ու իմաստային եւ ոճական որոշակի տարբերութիւններով դարձուած են երեք տող.

Ի հողոյ՝ երկնչիմ,

Ի ջրոյ՝ զարհուրիմ,

Իսկ ի վէմըս բնակելով՝ արիամարեմ գնոսա:

12 ԳԵՒԻԴԵԱՆ, Վ., Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, Մասն Ա., Վեմետիկից Հոռոմ (16-րդ դար), Երևան 2012, 8:

13 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, Ա., Հայ միջնադարեան հանելուկներ, 171:

14 ՄԱՏԵՆԱԳԻՐԲ ՀԱՅՈՅ, ԻԱ., ԺԲ. դ., ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, ԳԻՐԲ Ա., Երևան 2018, 540:

Համեմատելիս ունենում ենք հետեւեալ փոփոխութիւնները՝ հրից զարհուրելի-հողից երկնչել, ջրից սասանուել-ջրից զարհուրել, վէմին նստել-վէմին բնակուել: Եթէ վերջին երկուսը առարկայական եւ իմաստային նոյն տիրոյթում են, ապա առաջին փոփոխութիւնը՝ նոր խորհրդանշանի՝ հողի ներմուծմամբ, նոր յատկանիշ է պատկերագրում՝ կապուած ժամանակաշրջանի հետ: Հրից զարհուրելը այստեղ դարձուել է հողից երկնչել թերեւս քայքայուելու իմաստով, առաւել եւս, որ արդէն ԺԲ. դարից սկսել էին ինչ-ինչ պատճառներով հողում ձեռագրեր թաղել:

Շնորհալու հանելուկում գրի թուային խորհուրդը ներկայացնող չորս տողերը որոշակի ոճական տարբերութեամբ համընկնում են Դաւթին վերագրուող հանելուկի հետ.

Եւ անուն իմ բաղկանայ յերից գրից.
Երբեակն ի միակէն,
Քսանեակն ի տասնեկէն,
Հինկհագարեակն ի հագարէն:

Նկատելի տարբերութիւններ ունի ուշ միջնադարում ստեղծուած եւ Մնացականեանի ժողովածուի մէջ 37րդ շարքի ներքոյ բերուած հանելուկաշարը: Դաւթի եւ Շնորհալու մօտ գիրը խօսում է իր անունից՝ առաջին դէմքով: Դա նկատի ունենալով՝ հեղինակը՝ Աբրահամ Աստապատցին (ԺԸ.-ԺԹ. դարեր), այն վերնագրել է «Ի բերանոյ գրոցն»¹⁵: «Ձեռք Ամնակալին» կապակցութիւնը դարձուած է «Ձեռն լուսեղէն»՝ «Ձեռն լուսեղէն գիս յօրինեաց», որով ինչ-որ տեղ նուագեցուած է աստուածային խորհուրդը:

Այբուբենի սկզբնապէս 24 տառ լինելը արտայայտուած է ոչ թէ երկու 12ով, այլ հետեւեալ թուային գուգորդմամբ.

Նախ էի չորիցս վեցեակ,
Անեցայ. առայժմ եմ վեցից վեցեակ (էջ 427):

5-6րդ տողերը այստեղ նոր են եւ չեն հանդիպում նախորդ երկուսում.

Եմ շտեմարան իմանալի
Եւ գիտեալորն բաշխեմ քաղցեւոցն ի յայսմ յաւիտենի:

15 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ Ա., Հայ միջնադարեան հանելուկներ, 427:

Գրով գրուած տողերը հոգեւոր սննդի իմանալի շտեմարան են համարուում քաղցեալների համար:

*7-9րդ տողերը դարձեալ չկան նախորդ երկուսում եւ կապ-
ւում են լուսեղէն գծագրմամբ գրերի գրուելու գաղափարի հետ:*

Մարմին եմ եւ կերպարան յօդաւորին,
Որպէս եւ գտյն մառիս կերպաւորեալ՝ մարմնացուցի,
Եւ զնկարելոյն ի լուսոյ զմօրն հաւատոյ պայծառութիւն
յայտնեցի:

*Ջրից ծնուելու եւ ջրից մահանալու միտքը, ինչպէս նաեւ
հրից սարսափելը արտայայտուել է չորս տարրերից երկուսի
վկայակոչմամբ:*

Ծնունդ իմ եւ մահ իսկ ի յերկրորդ տարրէ,
Ի չորրորդէն զարիւրիմ:

*Ինչպէս յայտնի է, աշխարհը կազմող չորս տարրերն են
համարուում հողը, ջուրը, օդը եւ հուրը¹⁶: Այստեղ յիշուում են
ջուրը, որից ծնուում՝ գրուում եւ մեռնում՝ ջնջուում է գիրը, եւ
հուրը, որից զարհուրում է:*

*Հինգ տողից բաղկացած ճրդ տունը թաքնագրուում է հեղի-
նակի անունը՝ Աբրահամ բառի բաղաձայնների թուային համար-
ժէքները ներկայացնելու միջոցով:*

Իսկ անուն սմին այսմ ծնողի՝ ի հնգից կազմի.
Ի միոյ՝ նախկնէն եւ երկրորդէն,
Ի հազարի՝ հինգերորդէն,
Ի տասնի՝ եօթներորդէն
Եւ ի հարիւրի՝ երկրորդէն:

*Միաւորների մէջ նախկինը՝ այսինքն առաջին՝ «այբ» տառն
է, երկրորդը «բեն» տառն է, հազարաւորների մէջ հինգերորդը՝
«րէ» տառը, տասնաւորների մէջ եօթերորդը՝ հո տառը, եւ հա-
րիւրաւորների մէջ երկրորդը «մեն» տառն է. Աբրահմ-Աբրահամ:*

*Իւրօրինակ հանելուկ յիշատակարանը Աստապատցին գետե-
ղում է իր՝ 1807ին տպագրած «Ներքողեան սրբոյ Աթոռոյն էջ-
միածնի» գործի վերջում¹⁷ առաջնորդուելով հանելուկի ներբո-*

16 ԵՋՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, *Եղծ աղանդոց*, աշխտ. Ա. Ա. Արքահամեանի, Երե-
ւան 1970, 33:

17 ԱՐԲԱՀԱՄ ԱՍՏԱՊԱՏՑԻ, *Ներքողեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի*, Կ.
Պոլիս 1807, 204:

դական ոգով: Դրանով նա նաեւ ամրագրում է, որ Դաւիթ Քերթոզի ստեղծագործութեան փիլիսոփայութիւնը ընկալուել եւ փոխանցուել է դարերի ընթացքում:

Գրին նուիրուած հանելուկներում, Շնորհալուց սկսած, տարածւում է գիրը որպէս սեւ արգանդից՝ թանաքամանից ծընւած լինելու եւ սպիտակ դաշտում, որպէս ձեռագրի էջերում սեւ մաքիների նման արածելու կամ տարածուած լինելու պատկերը: Այն կայ նաեւ ժողովրդական հանելուկներում՝ «Արտը ցերմակ, սերմը՝ սեւ», «Սեւ ոչխար՝ սպիտակ սար», «Ճերմակ լեռներ, / Սեւ-սեւ ածէր»¹⁸, ուստի Ս. Յարութիւնեանը այն վերցուած է համարում ժողովրդի կենցաղային միջավայրից, երբ աշնանը առաջին ձիւնն է իջնում դաշտերին ու լեռնալանջերին, ոչխարների հօտերը դեռեւս մակաղում են արօտավայրերում՝ յիշեցնելով ձեռագրերի սպիտակ էջերի վրայի գրերի սեւ կէտերը¹⁹:

Գրին նուիրուած եւ առաջինը Շնորհալու մօտ հանդիպող հանելուկում ասուում է.

Մօրն արգանդն սեւային,
Հայրն սոյնպէս ամենեւին,
Որդիքն սեւ ծնանէին
'Ի ի սպիտակ դաշտ բնակէին (էջ 251):

Ինչպէս ասացինք, սեւային մայրական արգանդը թանաքամանն է, ուր մտնող գրչածայրը եւս սեւ է: Նրանցից ծնւում են սեւ որդիները եւ բնակւում ձեռագրի սպիտակ էջերում:

Յայտնի է, որ ձեռագրերում օգտագործուել են կարմիր, կանաչ, կապոյտ եւ այլ գոյներ, բայց դրանք ունեցել են կիրառութեան սեղմ շրջանակ, օրինակ՝ կարմիր թանաքով գրուել են խորագրերը, նկարուել զարդանախշերը: Իսկ շարադրանքը գրուել է սեւ թանաքով, որի լայն կիրառութիւնն է պատճառը, որ հանելուկները հիւսուել են պատկերային՝ սպիտակ-սեւ համադրութեամբ:

Սեւ արգանդից ծնուելու եւ սպիտակ դաշտում տարածուելու պատկերն է ընկած Շնորհալու հանելուկների առաջին շարքի 97 եւ 99 հանելուկներում եւս: Առաջինում ասուում է.

18 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Հայկական ՍՍՌ ԳԱ հրտ., Երևան 1965, 178:

19 Անդ, 57-58:

Սերմն սեւ ու ջրահովով,
Դաշտն գուգած սպիտակ բամբկով,
Հինգ եզն՝ ի լուծն հարօրով,
Իւրեանց վաստակն՝ ընթանալով (էջ 251):

Նախորդ հանելուկի սեւային արգանդի պատկերի շարունակութեամբ այստեղ գրի սերմն է սեւ անուանուում: Այս սերմը սերմանում է գրքի բամբակեայ սպիտակ էջերին: Բամբակի մասին յիշատակութիւնը կարեւորում է Հայաստանում թղթի պատրաստման պատմութեան տեսանկիւնից: Սա մի յիշատակութիւն է, որ ԺԲ. դարում Հայաստանում թուղթ են պատրաստել բամբակից²⁰:

Արօրին լծուած հինգ եզներով դաշտը, այսինքն՝ ձեռագրի էջը հերկելը, կարծում ենք, վերաբերում է ձեռագրի գրչի՝ ձեռքի հինգ մատներով գրիչը պահելով գրելուն, ինչպէս որ մշակն է եզներով հերկում դաշտը:

Շնորհալու՝ գրին եւ գրքին նուիրուած յաջորդ հանելուկում ասում է.

Շնորհալից մին աղիւսակ,
Ունէր հազար գառն սպիտակ,
Իւրեանց մաքիքն էր գերդ քանաք,
Իւրեանց հովիւն էր գերդ հրեշտակ (էջ 253):

Նախ հետաքրքիր է «Շնորհալից» բառը, որով բնորոշում է գիրքը: Հաւանական չէ, որ այստեղ Շնորհալին իմաստային բառախաղով նկատի է ունեցել իրեն: Նախ՝ համեստութիւնը թոյլ չէր տայ, եւ երկրորդ՝ Շնորհալի բնորոշումը Ս. Ներսէսին տրուել է աւելի ուշ: Մ. Արեղեանը, վկայակոչելով Հ.Ղ. Ալիշանին, Հ. Գ. Զարբհանալեանին, Մ. Օրմանեանին, որ 12րդ դարում Շուղրի կամ Քեսունի Կարմիր վանքում ուսանած մի շարք հեղինակների տրուել է Շնորհալի բնորոշումը, ընդունում է նրանց դիտարկումը, որ այն որոշակի գրական եւ եկեղեցական տիտղոս է եղել²¹: Ըստ երեւոյթին, նոյն այդ տիտղոսով է այստեղ Շնորհալին մեծարում եւ բնորոշում գիրք եւ գիրքը:

20 Հայաստանում քղթի պատրաստման մասին տե՛ս Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի Բահանայի, աշխտ. ՄԱԹԵՆՈՍԵԱՆ, Ա., Երեւան 1997, 34-36:

21 ԱՌԵՂԵԱՆ, Մ., Երկեր, Դ., Երեւան 1970, 99-100:

Այս հանելուկում արդէն գրքի թերթերն են համեմատուում սպիտակ գառների հետ, իսկ գրերը հանդէս են գալիս որպէս սեւ մաքիներ, որոնց հովուին հրեշտակ անուանելը պատկերային նորութիւն է: Դժուար է ասել՝ ձեռագրի գրչին նկատի ունի, թէ ձեռագիր կարդացողին:

Շնորհալու հանելուկների առաջին շարքում գրին եւ գրքին նուիրուած հանելուկները մի ամբողջութիւն են կազմում եւ զետեղուած են հմր 96-99ի ներքոյ:

Առաւել դժուար ընկալելի են Շնորհալու երկրորդ շարքի 30-31րդ հանելուկները:

30րդ հանելուկում ասուում է.

Մուկիդ կանչող եւ ձայնն ի խոր,
Դաշտն ընդարձակ եւ խնդմնդոր,
Ամբոխն անհուն խուլ եւ խոլոր,
Արդիւնքն շատ եւ զօրաւոր (էջ 328):

Ձայն տուողը՝ մունետիկը՝ «մուկիդ կանչողը», եւ խոր ձայն ունեցողը գիրն է, որ դարձեալ որպէս մաքի է ներկայացուում: Ակնյայտ է, որ երկրորդ տողը վերաբերում է ձեռագրի էջին, որ նմանեցուում է ընդարձակ ու խանդակուած, այսինքն՝ դարուփոսերով լի դաշտի:

Ինչ վերաբերում է տողերի իրար հետ կապակցուած իմաստ արտայայտելուն, թերեւս այն բացատրուում է Նարեկացու «ի խորոց սրտի» հնչող ձայնի հետ: Ընդարձակ եւ խորը դաշտից՝ գրքի էջերից հնչում է մաքիի ձայնը՝ գիրը: Ամբոխը, ըստ երեւոյթին, գրքում տեղ գտած գրերի խումբն է, ինչպէս որ գրերը նաեւ զօրքի հետ են համեմատուում: Գրերի համախումբը՝ ամբոխը, որպէս գրերով արտայայտուած իմաստ, շատ զօրաւոր է:

Երկրորդ բանաստեղծութեան մէջ ասուում է.

Միասունի, բազմոտանի
Եւ գիսաւոր ընթացք ունի,
Ի խորս անճառ զննեալ նստի
Եւ յանջրդիս նա մեռանի (էջ 329):

Միասիւնը ձեռագրի էջերն են: Բազմոտանին կա՛մ ձեռագրի էջերի իրար յաջորդող տողերն են, որոնց դասաւորութիւնը նմանեցնում է գիսաւոր ընթացքի, կա՛մ էլ ձեռագրերի էջերը: Անհասկանալի են վերջին երկու տողերը: Հաւանաբար ցանկա-

նում է ասել, որ երբ չի կարդացւում, գիրքը կեանք չի ունենում:

Գրքի էջի՝ որպէս դաշտի եւ գրի, որպէս մաքրի պատկերը տարբեր ձեւերով գտնում ենք յաջորդող շրջանի հանելուկներում եւս:

Գէորգ Երզնկացու՝ գրքին նուիրուած հանելուկում ասւում է.

Տուն մի տեսայ սպիտակ փռած,
Ու սեւ հաւեր ի ներս թառած,
Ձուս ածէին ցեղք ի ցեղաց,
Լեզուաւ խօսին բանականաց (Էջ 389):

Երզնկացու հանելուկում տունը գիրքն է, որի էջերը սպիտակ տարածւում են: Գրքերը սեւ հաւերի նման այդ տանը թառած են: Տարբեր տեսակի ձուերը այդ գրքերով արտայայտուած մտքերն են: Բանականների լեզուով խօսելը այդ մտքերը արտայայտելն է:

Սեւ կենդանու սպիտակ դաշտում գտնուելու պատկերի մէկ այլ դրսեւորումն է 15րդ շարքի 7րդ հանելուկը, որի հեղինակը Յովհաննէս Ծործորեցին է.

Սերմըն՝ սեւ,
Դաշտն՝ սպիտակ,
Ձեռով ցանեմ,
Բերանով հնձեմ (Էջ 357):

Ձեռագրի էջի գիրը սպիտակ դաշտում սերմանուած գիրն է: Ձեռքով գրելը համեմատուում է ձեռքով ցանելու հետ: Ձեռքով գրուածը բերանով է հնձւում՝ կարդացւում: Վերջին երկու տողերը ներկայացնում են միանգամայն նոր պատկեր եւ համեմատութիւն, որ չենք գտնում մինչ Ծործորեցին գրուած հեղինակային հանելուկների մէջ, բայց որ այնքան տարածուած է ժողովրդական հանելուկներում, օրինակ՝ «Ձեռնովս ցանեմ, // Բերնովս քաղեմ»²²:

Այս հանելուկի գրեթէ բառացի նոյնութեամբ տարբերակը գտնում ենք նաեւ 43 շարքի հայատառ թուրքերէն հանելուկում²³: Այս շարքում կայ եւս մի հանելուկ, որի վերջին երկու

22 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, 179:

23 ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ Ա., Հայ միջնադարեան հանելուկներ, 438:

տողերը նույնպես վերաբերում են գրի խօսելուն: Անանուն հեղինակի հանելուկի թարգմանություն մէջ ասւում է.

Սարից Է գալիս մարդու հետ,
Մէջը լիքն Է նշի նման,
Ոչ բերան կա, ոչ լեզու,
Խօսում Է մարդու հետ (էջ 438):

Գիրքը այստեղ ներկայացւում է որպէս մարդու հետ իջնող բեռ: Գրքի գիրը համեմատւում է նուշի մէջ գտնուող հատիկի հետ: Գիրքը, չունենալով բերան եւ լեզու, խօսում է մարդու հետ, երբ մարդը կարդում է գրքի միջի գրերը:

Հանելուկի ժողովրդական տարբերակում ընդամէնը երկրորդ տողի իմաստային նուրբ փոփոխութեամբ լուծման առարկան դարձել է նամակ.

Լեռնէն կու գա մարդու հետ,
Մէջը լեցուն անուշներ,
Ոչ բերան ունի, ոչ լեզու,
Այլ կը խօսի մարդու հետ²⁴:

Մնացականեանի ժողովածուի 38րդ շարքի 1ին հանելուկի երկու տարբերակներն էլ աչքի են ընկնում իրենց անսովորութեամբ: Առաջին տարբերակում ասւում է.

Աղբատ մի կայր ի աշխարհի,
Երկինք եւ երկիր ի բռն ունի.
Արարածոցս կերակրի,
Բերան եւ յարգանդ ոչ ունի (էջ 428):

Հանելուկը կառուցուած է պատկերային հակադրութեան վրայ: Աղբատը իր ձեւքում ունի երկինքը եւ երկիրը: Այսինքն՝ գիրքը իրենում պարունակում է երկինքը եւ երկիրը, որ յիշեցնում է Չարենցի՝ գրքերի աշխարհի՝ անեղր տիեզերք լինելու մասին խօսքերը:

Նկատի ունենալով, որ գրով ստեղծուած խօսքերը կերակրում են մարդկանց, այդ աղբատի համար իմաստային հակադրութեամբ ասւում է, որ մարդկանց է կերակրում: Հանելուկին աւելի զարմանահրաշուջիւն հաղորդելու համար վերջին տողում որպէս եզրափակում գրում է, թէ այդ աղբատը բերան եւ արգանդ չունի:

24 ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, 180:

Հանելուկի երկրորդ տարբերակում ասում է.

Ասեմ, թե անհայր ու անմայր է,
վկայեմ, թե չե՛ կենդանի,
եկեղեցիս գարդ լինի
եւ բոզ կանանց՝ յոյժ պիտանի (էջ 428):

Անհայր եւ անմայր լինելը նախորդի արգանդ չունենալու մտքի անմիջական շարունակությունն է: Երկրորդ տողում արտայայտուել է գրերի համար յաճախ ասուող այն միտքը, որ գրերը կենդանի չլինելով ձայն են արձակում, երբ գրանք կարդում են: Երրորդ տողը վերաբերում է եկեղեցում գտնուող սուրբ մատեաններին: Վերջին տողը իմաստային առումով, գրի հետ կապուած, դժուար մեկնելի է: Հեղինակը թերեւս ցանկանում է ասել, որ անբարոյ կանանց համար գիրքը պիտանի է բարոյականութիւն քարոզելով:

Շարքը վերագրուած է Դաւիթ Անյաղթին՝ «Գիր» պատասխանով: Ա. Մնացականեանն իրաւացիօրէն կարծում է, որ այդ հանելուկների հեղինակը Շնորհալին է²⁵: Հանելուկների տարբերակները գետեղուած են Շնորհալու շարքում «Ձայն» խորագրով: Անշուշտ, հնարաւոր է, որ նոյն պատկերը վերագրուի տարբեր աւարկաներին՝ խարսխուելով ընդհանրական յատկանիշների վերայ: Ձայնի պարագայում եկեղեցու զարդ կարող են լինել արարողակարգերի ժամանակ հնչող խօսքերը, հոգեւոր երգերը, իսկ չորրորդ տողը հասկանալի է դառնում Շնորհալու մէկ այլ հանելուկի՝ «Դուստր Հերովդիայ», առաջին տողի պատկերաւոր արտայայտութեան հետ զուգահեռում: «Բոզ մի կայր խիստ նարտասան»²⁶:

27րդ շարքի հմր 16 հանելուկը նոյնպէս գրուած է առաջին դէմքով, ինչպէս Դաւիթ Քերթոզինը.

Եկ, որ ցուցից զիմ կերպս քեզ,
Ի բամբակի կու նստիմ ես,
Թե զիմ թիւս կու հարցանես,
Եմ եւ ԻԳ թվով եմ ես (էջ 404):

Գիրը հրաւիրում է ցոյց տալու իր ձեւը: Ասում է, որ բամբակին է նստում, այսինքն՝ բամբակի վրայ է գրուած: Բամ-

25 Անդ, 72-73:

26 Անդ, 242:

բակի մասին վերստին յիշատակութիւնը ցոյց է տալիս, որ մագաղաթին գոլգահեռ տարածուած է եղել թուղթը, որն իր հերթին պատրաստուել է բամբակից:

Գիր բառի թուային արժէքը այստեղ հակադարձ ընթացքով է ներկայացուած՝ $RH = R (5000 \text{ ԵԱ}) + H (20) + G (3)$:

Գիր-էջեր յարաբերակցութիւնը եթէ կայուն ձեւով ներկայացուած էր սպիտակ դաշտի սեւ մաքիներ կամ թռչուններ պատկերով, ապա գիրքը, պայմանաւորուած կեանքում կատարած իր դերով եւ ունեցած գործառնութիւնով, հանելուկներից իւրաքանչիւրում մի պատկերով եւ համեմատութեամբ է ներկայացուած:

Աստուածատուր գրչի՝ գրքին նուիրուած հանելուկում ասուում է.

Պիլպուլ մի կայ հագար բերնէն,
Ամէն բերան՝ հագար լեզուէն,
Որք որ գճայն նորա լսեն,
Զերկնից դրախտն տեսանեն.
ԶԱստուածատուրս այլ թող յիշեն,
Որ գրեցի գրանս, թէ գիտեն (էջ 412):

Գիրքը, որ կարդում են, խօսող հաւք է ներկայացուած: Քանի որ ամէն թերթը առանձին է ընթերցւում, դառնում է հազարաբերան, եւ իւրաքանչիւր էջի տողերն էլ դառնում են այդ էջի հազար լեզուները: Միջնադարեան ձեռագրերը գերազանցապէս կրօնական բնոյթ ունեն, ուստի ասուում է, որ ով այդ հաւքերի ձայնը լսում է՝ գործը կարդում, նա երկնային դրախտն է տեսնում:

Հանելուկի իմաստային այլաբանութիւնը այստեղ զարգանում է գեղարուեստական պատկերի ծաւալմանը գոլգահեռ: Կախարդական հաւքը ժողովրդական ստեղծագործութիւններում երգում է կախարդական այգում: Ամենակախարդական այգին ժողովրդական մտածողութեամբ դրախտն էր, ուստի հանելուկի հազարաբերան երգող բլբուլի ձայնը լսողի առջեւ պատկերում է երկնային դրախտը:

Այս հանելուկը այն քիչ հանդիպողներից է, որ վերջում նաեւ չափածոյ յիշատակարան ունի, որում յիշատակարաններին բնորոշ ձեւով ասուում է, որ Աստուածատուրին թող յիշեն, եթէ հասկանան նրա ասածները: Հետեւաբար, յիշատակարանը, որ պատմողական բնոյթ ունի, այստեղ ներկայացուած է դարձեալ հանելուկային ձեւի մէջ:

Գիրքը մարմնավորում է ազատ խօսքը եւ միտքը: Ազատա- սիրական այն գաղափարները, որոնք հնարաւոր չի եղել ուղղա- կիօրէն արտայայտելու իշխողների առջեւ, գրաւորուել են գրքե- րում տեղ գտած գործերում:

33րդ շարքի 19րդ հանելուկում գիրքը ներկայացւում է որպէս կայսրերի եւ սարուկների առջեւ խօսող քարոզիչ եւ ու- սուցանող, որով գրքի խօսքն ուղղուած է հասարակութեան բո- լոր խաւերին՝ սարուկներից մինչեւ իշխողները:

Ընդ կայսերաց եւ ըստրկաց խօսիմ անյագ,
Քարոզատու եւ ուսուցիչ եմ յոյժ արագ,
Շրթանց իմոց բղիւնն իմաստք, գոր միշտ բանամ,
Բայց գոր ասեմն եւ փարոզեմն՝ ոչ հասկանամ (էջ 418):

Գրքից կարդացւում՝ բխում են նրանում գրուածների ի- մաստները, գիրքն ինքը, սակայն, չի հասկանում իր ասածը՝ ի- րենում գրուածի կարդացուող իմաստը: Ժողովրդական մտածո- ղութեանը բնորոշ ձեւով հանելուկի իմաստը խորանում է վեր- ջին տողում՝ ստեղծելով իմաստատրամաբանական հակադրու- թիւն, երբ ասւում է, թէ գիրքը չգիտէ, թէ ինչ է գրուած իրե- նում, այլ դա կարդացողն է հասկանում:

Վերադառնալով Շնորհալու հանելուկներին՝ նշենք, որ նրա երկրորդ շարքի 33րդ եւ 34րդ հանելուկները նուիրուած են Հա- յոց Այբուբենի տառերի թիւին: Առաջին հանելուկում ասւում է.

Ի չորս տասնէն չորս էառ,
Ջայլն երեք կացոյց յերեսան,
Ամէնն է տասը հագար
Մէկ պակաս եւ այլն ի լման (էջ 329-330):

Չորս տասից՝ քառասունից երբ հանում ենք չորսը, ստաց- ւում է 36՝ Հայոց Այբուբենի տառերի թիւը: Երկրորդից չոր- րորդ տողերի իմաստը հասկանալի չէ:

Երկրորդ հանելուկում ասւում է.

Ինն քառակի փակեաց,
Որ քարտար մարդիկն իմանան,
Ջկէսն տասնեւութ առնէ,
Որ ախմար մարդիկն չիմանան (էջ 330):

Առաջին տողով պարզ է, որ ցանկանում է ասել՝ $9 \times 4 = 36$: Շնորհալին թէեւ գրում է, որ այն ճարտար մարդիկ կարող

են հասկանալ, սակայն բաւականին հեշտ գուշակելի է: Նոյնը վերաբերում է 3րդ տողին, ուր ասում է, թէ կէսը դառնում է 18, որ 36ի կէսն է:

30րդ շարքի՝ Մովսէս Բջնեցու հանելուկաշարը կազմուած է վեց հանելուկներից: Առաջինում ասում է.

Երեսուն եւ վեց միակ,
Ութ եւ տասն լծակ,
Որ է՝ երբեակ
Երկոտասանեակ (էջ 410):

Նախորդ մի քանի հանելուկների նման այստեղ եւս Այբուբենի տառերի 36 լինելը ներկայացւում է թուային հնարաւոր տարբեր գուգորդումներով:

Շարքի առաջին հանելուկը բաւականին պարզ ձեւով ներկայացնում է մինչ այդ եղած թուային յարաբերութիւնները՝ կապուած Այբուբենի 36 տառ ունենալու հետ: Առաջին տողում ասում է, որ այն կազմուած է մէկ 36ից: 2րդ տողում լծակը ունի գոյգի իմաստը, որով լծուում են եւ մի լծակ 18ը հաւասար է 36ի: 3-4րդ տողերում 36ը ներկայացւում է 3×12 :

Երկրորդ հանելուկը եւս թուային նման գուգորդումներ է պարունակում.

Ինն քառեակ,
Եօթն հնգեակ,
Մին քիւ աւելեակ (էջ 410):

Ինը քառեակը երեսունվեցն է: Եօթ հնգեակին՝ 35ին, գումարելով, աւելացնելով մէկ՝ ստանում ենք դարձեալ 36:

36ի թուային յարաբերակցութիւններին է վերաբերում երկտող երրորդ հանելուկը.

Չորս ութեակ
Եւ մին մորին կիսակ:

$4 \times 8 = 32$: Վերջինիս գումարած չորս, որ հաւասար է մէկ ութի կէսին՝ «կիսակին», կը դառնայ 36:

4րդ հանելուկում եւս նախ շեշտում է Այբուբենի 36 տառ ունենալը եւ ապա ասում է.

Չորս իննեակ,
Երեք տասնեակ
Եւ մի վեցեակ:

$$4 \times 9 = 36:$$

$$3 \times 10 + 6 = 36:$$

Հինգերորդ հանելուկում Այբուրենից անցում է կատարում վերջինս իրենում կրող գրքին.

ՔՆՆԵԼՈՅ Է ԱՐԺԱՆԻ

Տարողն՝ փոքրիկ,

Տարեալն՝ անհուն,

Տունն՝ ննջող,

Բնակողն անփուն,

Ի միասին գեղեցկագոյն,

Զի ոչ գտաւ նոցա հանգոյն (էջ 411):

Վերնագրով ուշադրութիւն է հրաւիրում հանելուկի վրայ, որ այն քննութեան արժանի է: 1-2րդ տողերում այն միտքն է յայտնում, որ գիրքը փոքր է, եւ գրքում տեղ գտած մտքերը մեծ են եւ անհուն:

Նախորդ հանելուկներից եկող համեմատութեամբ շեշտում է, որ գիրքը՝ որպէս գրքերի տուն, անշունչ է, որով եւ ննջում է, իսկ նրանում բնակուող գրքերը անքուն են, եւ երբ կարդում են, կենդանանում են:

Վերջին երկու տողերում այն միտքն է ընդգծում, որ գիրն ու գիրքը միասնութիւն են կազմում եւ անհամեմատելի գեղեցկութիւն ունեն:

Այբուրենին եւ գրքին նուիրուած հանելուկաշարն ունի հետեւեալ խորհրդաւոր աւարտը.

Տեսի երկու նաւ,

Միւսն՝ լի հրեշտակօք

Եւ միւսն լի մարդկամբ (էջ 411):

Գրքերի խորհրդաբանութեամբ՝ ձայնաւորները անվերջաւոր են եւ արտաբերուելիս չեն ընդհատում, ուստի մահկանացու չեն եւ յարաբերում են հրեշտակների հետ: Բաղաձայնները, սակայն, վերջաւոր են, որովհետեւ ընդհատուող հնչողութիւն ունեն, ինչպէս որ մահկանացու մարդու կեանքն է վերջաւոր²⁷: Ուստի կարելի է ենթադրել, որ գիրքը՝ որպէս նաւ, որպէս իմացութեան

27 Այս մասին տե՛ս ՊՕՂՈՍԵԱՆ, Գ., *Դանիէլեան գրքերի հարցը միջնադարեան քննադատական ըմբռնումների տեսանկյունից*, ի «Էջմիածին», 2005, Զ., 95-98:

տապան, իրենում կրում է ձայնաւորներին եւ բաղաձայններին, որպէս մահկանացու՝ մարդկանց եւ անմահ հրեշտակների:

Մի քանի հանելուկներ նուիրուած են գրչին: Վերջինս քանի որ ուղղակիօրէն կապուած է գրքի եւ գրերի հետ, որպէս գրքի էջերի վրայ գրեր գրող, ուստի գրչին նուիրուած հանելուկները եւս սերտօրէն կապուած են գրքին եւ գրերին նուիրուած հանելուկների հետ:

Գրչին նուիրուած առաջին հանելուկը եւս գտնում ենք Շ-նորհալու մօտ.

Քառեակ տառիւ անուն կոչէ,
Ձէ կեմդանի եւ փաշակէ,
Զինչ որ ուտէ՝ դարձեալ փախէ,
Նովաւ հոգիս մեր կերակրէ,
Սկիզբն է երբեակ ի տասնեկէ,
Չորսն է եօթնեակ ի հարիւրէ (էջ 329):

Առաջին տողով Շնորհալին նկատի ունի, որ գրիչ բառը կազմուած է չորս տառից: Գրիչը թէեւ կենդանի արարած չէ, սակայն թանաքն է ուսում՝ ճաշակում: Գրչի կողմից կերածը փսխելը նշանակում է, որ գրչից թանաքը դուրս է գալիս եւ գրւում թղթին: Չորրորդ տողում ասւում է, որ այդ փսխածով գրւածով, մեր հոգին է կերակրւում:

Ինչպէս որ գիր բառն յաճախ ներկայացւում էր իր թուային արժէքով, այստեղ նոյնը վերաբերում է գրիչ բառին: Առաջին տառի թուային արժէքն է միաւորների շարքում 3ը, վերջին տառինը՝ 700ը:

18րդ շարքի անանուն հեղինակի առաջին հանելուկն ունի 22 տող: Մէկ ամբողջութիւն կազմող, գրչով գրելուն եւ գրչութեան արուեստին նուիրուած այս հանելուկի մէջ իւրաքանչիւր երկու տողը հանելուկային բնոյթի իմաստային մէկ հարցադրում է, որ, հասնելով մինչեւ վերջին տողերը, ցոյց է տալիս գրչին բնորոշ յատկանիշները եւ ունեցած գործառոյթները: Այժմ երկտող առ երկտող վերլուծենք այն:

Հանելուկն սկսւում է հետեւեալ երկու տողերով.

Երեմ օրով, մէկ հետեւակ,
Չար ու քարի առնէ վաստակ (էջ 376):

Գրիչը պահում են ձեռքի երեք մատները, որոնք թղթի վրայ չեն եւ ձիւռ նման են գնում, իսկ հետեւակը բռն գրիչն է,

որով գրուածը, ըստ բնագրի բնոյթի, կարող է չար եւ բարի լինել:

Գլխովն ի վագ լինի յերակ,
Երեսն՝ թուխ, անձն՝ բարակ:

Թանաքը գրչի վերեւից վար է հոսում գրելիս²⁸: Գրչածայրը թանաքից սեւանում է, իսկ մարմինը՝ գրիչը, երկար ու բարակ է:

Ամէն բանի ինքն էր ճարակ
՚Ի իր բանելոյ տեղն՝ սպիտակ:

Ինքն է ճարակում, իր աշխատատեղում սպիտակ թղթի վրայ գրում:

Իմաստնոցն՝ բարի գաւակ
Եւ յիմարացն՝ խայտառակ:

«Անգիտաց անպետ» արտայայտութեան հետեւողութեամբ գիրը իմաստունների համար խորհրդատու է, բարի գաւակ, յիմարների դէպքում վեր է հանում նրանց խայտառակութիւնը:

Ջաւհար բանին՝ նա աւագակ
Առանց լեզուի առնէ կատակ:

Այստեղ աւագակը դրական իմաստով է, որպէս գոհար միտքը տանող, ինչպէս որ Ագաթանգեղոսի պատմութիւնից սկսած հանդէս է գալիս խօսքի վաճառականը²⁹:

Վերջին տողով այն նոյն պատկերն է, որ գիրը լեզու չունի եւ խօսում է իրեն կարդացողի միջոցով:

Իր ուտելիքն՝ սեւ փափակ,
Դառնայ բղիւ գերդ ըզերակ:

Գրիչի ուտելիքը սեւ թանաքն է, որը բխում է գրչածայրից ջրի չիթի՝ երակի նման:

28 ԺԲ. դարից կիլիկիայում, ԺԳ. դարից Հայաստանի տարբեր շրջաններում հանդիպում են գնդիկաւոր գրիչներ: Այդ մասին տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1960, թիւ 5, 313-315, ԱՐԲԱՀԱՄԵԱՆ Ա., Հայոց գիր եւ գրչութիւն, 286: Վերը բերուած հանելուկի անանուն հեղինակը ստեղծագործել է ԺԳ.-ԺԴ. դարերում: Հանելուկում նա պատկերել է սովորական՝ երկար ու բարակ գրիչը՝ հաւանաբար ելնելով նրա շատ գործածական լինելուց:

29 Ագաթանգեղայ պատմութիւն, Վենետիկ 1862, 12-13:

Այնուհետեւ իմաստային ամբողջութիւնն են կազմում յաջորդող հետեւեալ չորս տողերը.

Ով որ վարէ գինգն յըստակ՝
Նորա բերէ բեռներու հակ.
Ով որ իւրմէ բան առնէ խակ՝
Նորա բերէ յերակ ապտակ:

Ով գրչով վստահ գրում է, տողերի հակ է ստեղծում, իսկ ով լաւ չի գրում, կաթած թանաքով ապտակ է ստանում:

Ամէն մարդոյ ինքն է պիտակ,
Թէ քագաւոր է, թէ՛ մըշակ:

Թագաւոր է, որովհետեւ գրերով իշխում է եւ գրելով մշակի պէս բանում է:

Յաջորդ երկու տողերը կապում են ժամանակի ընկերային միջավայրի եւ գրչութեան արուեստի հետ.

Անվարձ դատի քան ըզմըշակ,
Իսկի չիօսի առանց դանակ:

Այստեղ մշակը ներկայացւում է որպէս անվարձ դատելու խորհրդանշան, եւ ասւում է, որ գրիչը նրա պէս անվարձ գրում է: Սա ժամանակի ընկերային յարաբերութիւնների անողդակի արտայայտումն է:

Երկրորդ տողը ոչ թէ այն է ակնարկում, որ գրիչը խօսում է դանակի սպառնալիքի ներքոյ, այլ այն, որ գրչի ծայրը պարբերաբար բթացել է գրելիս, եւ այն շարունակ սրել են, որ նորից գրի³⁰:

Վերջին երկու տողով հեղինակը եզրափակում է, որ հանելուկի առարկան ո'չ ամառն է հանդերձ ուզում, ո'չ ձմրանը՝ մուշտակ, յենուելով արտաքին, առաջին հայեացքից տպաւորուող

30 Մի յիշատակարանում պահպանուել է Յակոբ գրչի տաղը, որում գրում նշում է գրեմական պիտոյքները: Գրչին նուիրում տողերում ակնարկւում են աշխատելու ժամանակ առաջացած խնդիրները.

Երկրորդ՝ ասեմ վասն գրչիս,
Դու ժամէժամ է՞ր կու յանգչիս.
Մատունս իմ ոսկոր է եւ միս,
Մինչ գրեց՝ զայրացաւ հոգիս:

Տե՛ս «Էջմիածին», 1950, յուլիս-օգոստոս, 86:

յատկանիչի վրայ, որ գրիչը որեւէ աշխատատար խնամք չի պահանջում:

Գէորգ Երզնկացու հեղինակած 21-րդ շարքի 2-րդ հանելուկում ասւում է.

Հաւ մի տեսայ ես անկենդան,
Որ կուտ ուտէ ձեռով մարդկան,
Եթէ զաշխարհս զամէնն տան
Ուտէ 'լ ասէ. Ձե'մ քաւական (Էջ 388):

Այստեղ գրիչը արդէն ներկայացւում է որպէս անկենդան հաւ, որ հետաքրքրութիւն է հաղորդում հանելուկին: Նոյն ձեւով՝ թանաքը որպէս կուտ: Ինչպէս որ մարդը գրիչը թաթախում է թանաքի մէջ, այնպէս եւ այստեղ անկենդան հաւը կուտ՝ թանաքի գնդիկներ է հաւաքում մարդու ձեռքերով:

Քանի որ գրող գրչի համար շարունակ թանաք է հարկաւոր, ուստի ասում է, թէ այդ հաւին որքան էլ կուտ տան՝ ողջ աշխարհը, դարձեալ կ'ասի, թէ հերիք չէ:

Այս հանելուկի երկրորդ տարբերակում ասւում է.

Օձ մի տեսի անկենդան,
Կեր ուտեր ձեռաց մարդկան.
Աշխարհս ուտէր՝
Դեռ չէր քաւական (Էջ 389):

Հանելուկի այս տարբերակը աւելի հարազատօրէն է արտայայտում գրչի արտաքինը եւ բնոյթը թէ՛ իր իմաստութեամբ եւ թէ՛ օձի նման լինելով ուղիղ եւ երկար: Յաջորդ երեք տողերը, ըստ էութեան, անկենդան հաւի մասին ասուածն են, թէ լինելով անկենդան, մարդկանց ձեռքից կեր էր ուտում եւ չէր յագենում:

Գրի եւ գրքի հետ են կապւում գրչութեան արուեստին վերաբերող (նկար 1) եւ թղթին, գրակալին ու տողաշարին նուիրուած մէկական հանելուկները: Նրանք լրացնում եւ ընդլայնում են գրի հետ կապուած պատկերները եւ համեմատութիւնները:

Թղթին նուիրուած հանելուկի հեղինակն է Ներսէս Շնորհալին: Նրա հանելուկների առաջին շարքի 95րդ հանելուկում ասւում է.

Է՛ր քանաւոր, չէ՛ր կենդանի,
Շատ գայ ի շուրջ, ոտուի չունի,
Ուր՝ մեծատուն եւ արքունի՝
Նա համարձակ երթայ, խօսի (Էջ 250):

Այստեղ լաւագոյնս արտայայտուել են հանելուկին բնորոշ իմաստային հակադրութիւնները եւ տրամաբանական փոխբացատումները:



Նկար 1. Ծերուն Ծաղկողի ինքնանկարը ձեռագրի էջը նկարագարողելիս, կից գրչութեան գործիքներով

Մաշտոցի անուան Մատենադարան, պատառիկ հմր. 1101:

Բանաւոր, այսինքն՝ խօսող լինելով, բայց եւ միաժամանակ կենդանի չլինելով՝ նկատի ունի, որ թուղթը խօսում է, երբ կարդում ենք նրա վրայ գրուածը:

Երկրորդ տողը եւս կառուցուած է իմաստային նման հա- կադրութեան վրայ, որ պտտւում է, սակայն ոտք չունի: Այստեղ նկատի ունի ձեռագրի էջի շրջելը, թերթելը:

Այս հանելուկը եւս կապւում է ժամանակի ընկերային հա- սարակական վիճակի հետ՝ ցոյց տալով գրի ունեցած հասարա- կական գործառնոյթը, թուղթ-նամակի կիրառական ոլորտը:

Թղթի վրայ գրուած գիրը քանի որ կարդում են նաեւ արքունի միջավայրում, ուստի ասում է, թէ մեծատունների մօտ եւ արքունիքում համարձակ խօսում է:

Յովհաննէս Ծործորեցու հանելուկում գրակալի համար (նկար 2) ասում է.

Փայտըն պատուելի,
Եկեալ կանգնեալ ի հանդիսի,
Ի գլուխն ունի մեռել մորթի,
Աստուած ի նմա փառաւորի (էջ 357):

Գրակալի փայտը պատուելի է համարւում, որովհետեւ գրակալը պատրաստուել է լաւ փայտից՝ եկեղեցում դրուելու համար:

Գրակալը հանդէսում է կանգնել, որովհետեւ եկեղեցում գրակալի առջեւ կարդում են եկեղեցական արարողութիւնների ժամանակ:


Գրակալի գլխի մեռեալի մորթին նրա վրայ դրուած մա- գաղաթեայ գիրքն է:

Գրակալով Աստուած է փառաւորւում, որովհետեւ գրակալի վրայ դրուած եկեղեցական գրքերում Աստուած է փառաբանւում:

Գրակալին նուիրուած ժողովրդական հանելուկը կառու- ցուած է նրա կիրառական նշանակութեան մատնանշումով.

Սարիմ վերեն մարդ մը կայնի,
Կը գրուցի՝ մարդ չի,
Կը քարոզի՝ վարդապետ չի³¹:

31 ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, 181:



Նկար 2. Գրական՝ վրան դրուած ձեռագրով եւ կից կատարուող խնկարկմամբ
Նկարիչ՝ Յովհաննէս Խիզանցի, Խիզան, 1390-1400

Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռգ. հմր. 346, քերթ՝ 1բ:

Գրական ճանաչողության առաջնությունը առանձնակի խորհուրդ ունի եւ կապում է Անիի կործանման առաջնություն հետ: Ասում է, որ անեցիները հարստանալով այնքան են շփանում, որ հոգեւորականներին անարգելու համար եկեղեցում բարձրահասակ հոգեւորականների առջեւ ցածր գրական են դնում, իսկ կարճահասակների առջեւ՝ բարձր: Երբ նման ձեւով վարում են Յովհաննէս Երզնկացու հետ, նա գայրացած անիծում է, եւ անէծքից Անին կործանում է³²:

Զարմանալի գուգաղիպութեամբ այս հանելուկի հեղինակն է Յովհաննէս Ծործորեցին, ով յաճախ շփոթում է Յովհաննէս Երզնկացու հետ, ում անէծքով, ըստ ժողովրդական առանդութեան, կործանուեց Անին:

Ձեռագրերի էջերի ուղիղ տառերը, որոնք անգամ տպագրական շարուածք են յիշեցնում իրենց կանոնաւորութեամբ, գրիչները կարողանում էին գրել տողաշարի շնորհիւ:

Տողաշարը իր մէջ տողային որոշակի հեռաւորութիւն ունեցող աղիւսակաձեւ գծաշար էր, որ կա՛մ խազերով, կա՛մ գծերով դրոշմում էին ձեռագրերի էջերին եւ գրում դրանց վրայ³³: Տարբեր ձեռագրերի չգրուած էջերին ցայտուն երեւում են տողաշարային այդ գծերը, որոնց վրայ գրում էր գրիչը:

36րդ շարքի առաջին բանաստեղծութեան մէջ, որի հեղինակն է Կարապետ վարդապետ Սեբաստացին, տողաշարի համար ասում է.

Ուղղաշաւիղ իր պիտանի,
Տառաշարից յար ընտանի.
Կրկին ի նմին յոյժ տատանի,
Թէ ոչ գնա առ ձեռն ունի (Էջ 424):

Այս հանելուկում միանգամայն հարազատ ձեւով ներկայացւում է տողաշարը որպէս ուղիղ գիծ, որի վրայ գրում են տառաշարները: 3-4-րդ տողերում այն միտքն է ընդգծւում, որ տողերը աչքի համար տատանւում են, եթէ ձեռքը գրելիս չի անցնում տողաշարի վրայով (նկար 3):

32 Տե՛ս Արրահամ կաթողիկոսի Կրետացոյ Պատմագրութիւն, Վաղարշապատ 1872, 109: ՂԱՆԱԼԱՆԵԱՆ, Ա., Աւանդապատում, Երեւան 1969, 158:

33 ԱՐԲԱՆԱՄԵԱՆ, Ա., Հայոց գիր եւ գրչութիւն, ԵՊՀ, Երեւան 1973, 287:



Նկար 3. Ղուկաս Աւետարանիչ, ձեռագրի էջին տողաշարեր գծելիս, կից դարձնալ գրչի գործիքներն են

Գլաճորի Աւետարան, մինչև 1307, ձեռգ. հմր. 170/466, քերթ՝ 298:

Շնորհալին հեղինակ է նաեւ երկու հանելուկների, որոնք եւս ուղղակիօրէն եւ անուղղակիօրէն կապուում են գրի խորհրդի հետ: Առաջինը վերնագրուած է «Միտմ».

Արդ է անթեւ եւ անփետուր,
Քան գծիծառն երթայ նա սուր,
Յերկրէ յերկիր շրջի թափուր,

Դառնայ ու գայ, բերե շատ հիւր,
Գետք ի գետոց հանէ մա ջուր,
Քակէ զամուր գտուն եւ զբլուր (էջ 211):

Մտքի սլացքը եւ աննիւթեղէն ընթացքը ներկայացնում է անթեւ լինելով: Նաեւ ասում է, որ անփետուր է: Վերջին համեմատութիւնը ուղղակիօրէն կապւում է գրքի հետ, որովհետեւ այն գրում էին փետուրէ գրչով: Շնորհալին ցանկանում է ասել, որ միտքը անփետուր է, այսինքն՝ դեռեւս չի մարմնաւորուել գրչով թղթին յանձնելով:

Սուր նեղ թեւերով չուող թռչունի՝ ծիծառին համեմատութիւնը յենւում է նրա փոքրիկ, բայց արագաթռչի լինելու վրայ:

Երրորդ, չորրորդ տողերում արտայայտուել է մտքի սլացքը: Մտովի աշխարհը չըջելը Շնորհալին արտայայտել է թափուր չըջել կապակցութեամբ, որ մարդը ֆիզիկապէս չի գնում, այլ մտովի: Մտքի ուժը արտայայտւում է անգամ մտքի ունեցած ֆիզիկական ուժով՝ գետերի ընթացքը փոխելով եւ տներն ու բլուրները քանդելով:

Վերջին այս երկու տողերը, կարծում ենք, դարձեալ կապուած է Շնորհալու ապրած ժամանակաշրջանի հետ: Պատահական չէ, որ մտքի ուժը ցոյց տալու համար բերում է գետերի օրինակը: Ուռուցումը Արեւելքում, այդ թւում եւ Կիլիկեան Հայաստանում, կարեւոր հարց էր:

Երկրորդ օրինակը մի քիչ տարօրինակ է, որովհետեւ ցոյց է տալիս մտքի աւերիչ եւ ոչ կառուցողական ուժը: Կարծում ենք, սա եւս կապուած է ժամանակի իրականութեան հետ: Կիլիկիայի հայկական պետութեան գլխաւոր խնդիրն էր բերդաքաղաքների պաշտպանութիւնը: Կաթողիկոսարանը գտնւում էր Հռոմկլայում, որ բառացի նշանակում է Հռոմէական կլայ՝ հռոմէական բերդ: Մայրաքաղաքն էր Սիսը, որի պատուին հաստատւած դրամի վրայ գրուած էր. «Սսոյ բերդն է քաղաւոր»³⁴:

Այնպէս որ Շնորհալին գրելով տների եւ բլուրների՝ բարձունքների քանդումը մտքի ուժով, ըստ երեւոյթին, նկատի է ունեցել Կիլիկայում գտնուող բերդի պաշարումը եւ պաշտպանութիւնը:

34 Ա.Լ.ԻՇԱՆ, Հ. Ղ., Սիսուան, Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ 1885, 216:

Գրի հետ է կրկնակիօրէն կապուում Շնորհալու՝ նաեւ քերականութեանը նուիրուած հանելուկը: Նկատենք, որ քերականութիւնը դիտարկուում էր գրչութեան արուեստի շրջանակում, եւ քերականութիւնն բառը բխեցուում էր քերել բառից հետեւեալ ստուգաբանութեամբ, որ գիրը գրուում էր փորագրութեամբ կամ քերելով³⁵:

Շնորհալին եւս այն դիտարկել է գրչութեան արուեստի շրջանակում. դա հաստատուում է եւ այն հանգամանքով, որ նրա հանելուկների երկրորդ շարքի հմր 30-34րդ հանելուկները նուիրուած են գրքին, գրչին եւ գրին, իսկ 35րդը՝ քերականութեանը.

Տեսի արուեստ մի եւ փոքրիկ,
Յոյժ պիտանի եւ գեղեցիկ,
Ունէր յիմեան երկու դրոնիկ,
Ութեակ թուով պատուհանիկ (էջ 330):

«Արուեստ փերականութեան» եւ «գրչութեան արուեստ» արտայայտութիւնների հետեւողութեամբ այն անուանուում է փոքրիկ արուեստ, որին տրուած «պիտանի» եւ «գեղեցիկ» բնորոշումներից պիտանին եթէ կարող էր վերաբերել քերականութեանը, ապա գեղեցիկը աւելի բնորոշ է գրչութեան արուեստին, որ նպաստում է գեղեցիկ եւ ճիշտ գրելուն: Երկու դռները քերականութեան ուսումնասիրութեան երկու բաժիններն են՝ գիրը եւ խօսքը³⁶, իսկ ութ պատուհանները՝ ութ խօսքի մասերը³⁷: Հանելուկի վերջին երկու տողերի պատկերը ծնունդ է միջնադարեան քերականների այն ըմբռնումից, որ քերականութիւնն է դէպի միւս գիտութիւնները տանող դռնն ու բանալին³⁸:

Ամփոփելով՝ Դաւիթ Քերթոզին վերագրուած առաջին հանելուկաչարի նիւթը յանգում է աստուածօրհնեալ գրի ներբող-

35 Տե՛ս Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին, 423:

36 Շնորհալու ըմբռնման յստակ ձեւակերպումը գտնուում ենք Առաքել Սիւնեցու մօտ. «Ջի փերականութիւնս է, որ գրանն ֆննէ եւ գմասունս բանին եւ զգիրս»: ԱՌԱՔԵՆԼ ՍԻՒՆԵՑԻ, *Յաղագս փերականութեան. Յամառօտ լուծմունք*, աշխտ. ԽԱԶԵՐԵԱՆ, Լ. Գ., Լոս Անճելըս 1982, 73-74:

37 АДОНЦ, Н., *Дионисий Фракийский и армянские толкователи*, Петроград 1915, 202.

38 Գրիգոր Մագիստրոսը գրում է. «Քերականութեամբս մտանել յամենայն արհեստ իմաստասիրութեան պարտ է»: ԽԱԶԵՐԵԱՆ, Լ., *Գրիգոր Պաղատունի Մագիստրոս. կեանքն ու գործունէութիւնը*, Լոս Անճելըս 1987, 359:

մանը՝ վերակերպաւորելով նրա ծնունդը, ցոյց տալով նրա նշանակութիւնը, կիրառական գործառնությունները եւ նրանում ամփոփուած խորհրդաբանութիւնը:

Քերթոզի այս ստեղծագործութեան գաղափարաբանութեամբ, կառուցուածքային առանձնապատկութիւնների հետեւողութեամբ հանելուկներ են գրել Ներսէս Շնորհալին, Աբրահամ Աստապատցին: Ձնայած ներգործուն ազդեցութեանը՝ այդ շարքերը կրում են հեղինակների անհատական մտածողութեան կնիքը բառիմաստային, պատկերային փոփոխութիւնների շնորհիւ:

Ներսէս Շնորհալին գրին նուիրուած ամենաշատ հանելուկների հեղինակն է: Նրա հանելուկներում այլաբանօրէն պատկերուել են գիրը, գիրքը, գրիչը, թանաքամանը, թուղթը, արծարծուել է այբուբենի տառերի խորհուրդը: Շնորհալին այս շրջանակի մէջ է դիտարկել նաեւ միտքը, քերականութիւնը: Հանելուկային բանաձեւերը երբեմն կառուցուել են ժողովրդական հանելուկներին բնորոշ պատկերային կաղապարներով, բայց աւելի յաճախ ինքնատիպ են, յօրինուած իրական երեւոյթներից ու առարկաներից վերցուած հանրածանօթ յատկանիշների հետաքրքիր զուգորդումներով, գրին ու գրչութեան արուեստին առնչուող մարդու լաւատեղեակութեամբ:

Յետագայ դարերում ստեղծագործած հեղինակները գրեթէ դուրս չեն եկել Շնորհալու նախննորած լուծման առարկաների շրջանակից: Այդ առումով առանձնանում են միայն երկու հանելուկ՝ նուիրուած գրակալին ու տողաշարին, որոնց հեղինակներն են Յովհաննէս Ծործորեցին եւ Կարապետ Սեբաստացին:

Քննութեան առարկայ միւս հանելուկների հեղինակները, անկախ կրած ազդեցութիւններից, կարողացել են չեղտադրումը դնել առարկաների տարբեր յատկութիւնների, կամ յատկութիւնների տարբեր դրսեւորումների վրայ՝ իմաստային որոշակի ոճաւորումներով:

Դարերի ընթացքում հանելուկները միտուել են դէպի աւօրեան, դէպի առարկաների գործածութեան տիրոյթները:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆԵԱՆ

Summary

ARMENIAN MEDIEVAL RIDDLES DEDICATED TO WRITING AND THE ART OF WRITING

HERIKNAZ VORSKANIAN

The first written Armenian riddles, invented in the V-VI centuries, are dedicated to writing. These riddles attributed to David Poet or David Philosopher follow each other with a certain purposefulness, they show the birth of writing as a divine creation, its donation to people from the heavenly height, the creation of the Armenian alphabet.

This riddle is made up of ten small units. It condenses the meaning of writing for the humanity as a whole, and with separate riddles it defines and characterizes the objective-functional specific applications of writing.

Following Davit Poet's riddle, the riddles of Nerses Shnorhali and Abraham Astapatsi were later invented. With some semantic and stylistic differences, the authors had maintained the ideology of David's riddle in relation to the spiritual symbol of the writing.

Shorhali expanded the thematic range of the riddles dedicated to writing, including the various subjects related to the art of writing. In addition to the riddles about the writing, book, the number of letters of the alphabet, there are riddles about the pen, paper, inkpot, ink and about the "necessary handy, beautiful little art" that is the grammar.

In later centuries the authors followed Shnorhali, preferring the same range of the subjects for the solution. There are only two riddles dedicated to new subjects: to a desk and to a string liner, which authors are Hovhannes Tsortsoretsi and Karapet Sebastatsi.

In the riddles dedicated to the writing, starting from Shnorhali, the enigmatic images-formulas used by him are also spread, such as the image of being born from a black womb, that is an inkpot, and being spread in a white field, as well as the images of the pages of a book compared with white lambs, of the letters compared with black ewes, of the book sheets with a field. They were applied by Georg Yerznaktsi, Hovhannes Tsortsoretsi, and by the anonymous author. The authors sometimes managed to give original tones to the same picto-

rial base. In his enigmatic form, the divine pen compares the book to a nightingale with a thousand mouths, to a speaking hen, whose voice can be heard only by one who sees the heavenly paradise.

In Stepanos Dashtetsi's riddle, the book is presented as a preacher and teacher speaking before both emperors and slaves.

The 36 letters of the Armenian Alphabet are presented in the book of riddles of Movses Bnjetsi with different possible numerical combinations. Although over the centuries, the riddles dedicated to writing have moved towards the everyday life, towards the realms of the use of the objects, however, they have preserved the mentality of the divine writing formed in the 5th century.